ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝

ՍԻՐԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ 1976 Թ.

Լիբանանյան ճգնաժամի առաջին փուլը, որն ընդգրկում է 1975—1976 թթ., կարևոր տեղ է գրավել Սիրիայի արտաքին քաղաքականության մեջ։ Դա պայմանավորված է ոչ միայն երկու երկրների միջև գոյություն ունեցող պատմաաշխարհագրական սերտ կապերով, այլև այդ ժամանակահատվածում Լիբանանում ստեղծված այն բարդ քաղաքական իրադրությամբ, որն անմիջականորեն շոշափում էր հարևան պետության՝ Սիրիայի շահերը, և սպառնալիք ստեղծում նրա անվտանգությանն ու կայունությանը։

Սիրիան շատ արագ մխրճվեց լիբանանյան հակամարտության մեջ։ Սկզբնական շրջանում, այսինքն՝ ամբողջ 1975 թ. ընթացքում, նա հանդես էր գալիս ճգնաժամը դիվանագիտական խաղաղ բանակցությունների միջոցով լուծելու առաքելությամբ միայն և հակամարտող կողմերին փոխըմբռնման հասցնելու ուղիներ էր որոնում։ Իսկ 1976 թ. Սիրիան ձեռնարկեց ռազմական միջամտություն, որը մեծ ազդեցություն թողեց դեպքերի հետագա զարգացման վրա։ Մեր կողմից ուսումնասիրվող խնդիրը գիտական քննարկման առարկա է դարձել մի շարք հեղինակների կողմից, որոնցից հարկ է նշել հատկապես Պ. Սիլի, Զ. Լենցովսկու, Ն. Վենբերդերի, Լ. Շեբրիի, Ս. Ռեգայի, Ա. Ասաադի, Ե. Դմիտրիևի, Լ. Վոլնովի, Վ. Կիսելյովի, Ա. Իվանովի, Պ. Սարաջյանի և այլոց աշխատությունները[1]։ Սկզբնաղբյուրի նշանակություն ունեցող աշխատություններից օգտագործել ենք Լիբանանի առաջադիմական-սոցիալիստական կուսակցության ղեկավար Քամալ Ջումբլաթի և Լիբանանի նախագահ Իլիաս Սարքիսի գլխավոր խորհրդական,

«Քաթաիբ» կուսակցության ազդեցիկ դեմքերից մեկի՝ հայազգի Քարիմ Բագրատունու հուշերը»։

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաև, որ լիբանանյան հակամարտությանը 1976 թ. սիրիական ռազմական միջամտության և դրան ուղեկից մի շարք հարցերի լուսաբանումը միաժամանակ հնարավորություն կտա ճիշտ գնահատելու հետագա տարիներին Լիբանանում Սիրիայի վարած քաղաքականությունը, ինչպես նաև լույս կսփռի մայրիների երկրի XX դարի վերջին քառորդի ողբերգական պատմությանն առնչվող ցարդ չհիմնավորված մի քանի տեսակետների վրա։

Լիբանանյան ճգնաժամը, որը, ինչպես հայտնի է, ծագեց 1975 թ. ապրիլի 13-ին Բեյրութի Այն առ-Ռումաննա թաղամասով անցնող պաղեստինցիների ավտոմեքենայի վրա աջքրիստոնեական «Քաթաիբ» կուսակցության զինված մարտիկների բացած կրակի հետևանքով և որին զոհ գնացին 27 պաղեստինցիներ, երկրում տարբեր քաղաքական դաշինքների ու խմբավորումների առաջացման պատճառ հանդիսացավ։ Չնայած այն հանգամանքին, որ այդ միջագեպը պատերազմը սկսելու լոկ առիթ էր և իր մեջ պարունակում էր խմորումների մի բարդ հանգույց[3], այնուամենայնիվ, դրանով պաղեստինյան գործոնը* դարձավ լիբանանյան հակամարտության կարևոր բաղադրատարրերից մեկը։

Ուստի լիբանանյան իրադարձությունների հանդեպ Սիրիայի վարած քաղաքականությունն անմիջականորեն առնչվում էր ինչպես զուտ ներլիբանանյան, այնպես էլ պաղեստինյան խնդրի հետ։

Ճգնաժամի առաջին օրվանից Պաղեստինի ազատագրության կազմակերպությանն (ՊԱԿ) իրենց պաշտպանությունը հայտնեցին երկրի ձախ ուժերը, որոնք միավորվել և կազմում էին «Ազգային շարժումը»՝ Ք. Ջումբլաթի գլխավորությամբ։

1975-ից սկսվեցին զինված բախումները՝ մի կողմից «Ազգային շարժման» ու ՊԱԿ-ի, մյուս կողմից՝ «Լիբանանյան ճակատի»** միջև։ Սիրիայի բոլոր ջանքերը՝ պաղեստինցիներին հակա-

---

* Այդ ժամանակ Լիբանանում էին գտնվում մոտ 230 հազար պաղեստինցի փախստականներ։

** «Լիբանանյան ճակատի» մեջ միավորվել էին երկրի աջ ուժերը՝ Սուլեյման Ֆրանջիեի, Պիեռ Ժմայելի և Քամիլ Շամունի գլխավորությամբ։

մարտությունից հեռու պահելուն, ապարդյուն անցան։ Հարկ է նշել, որ դեռևս 1975 թ. սեպտեմբերին, երբ հատուկ առաքելությամբ Բեյրութ ժամանեց Սիրիայի արտաքին գործերի նախարար Աբդ ալ-Հալիմ Խադդամը[4], վերջինիս միջնորդությամբ ստեղծվեց «Ազգային երկխոսության կոմիտե», որի մեջ մտան Լիբանանի աջ և ձախ ուժերը։ Սակայն կոմիտեի ընդունած ծրագրերը, որոնք նպատակ ունեին հասնել կրակի դադարեցմանը, ձախողվեցին՝ «Լիբանանյան ճակատի» կողմից ձեռնարկված նոր բախումների հետևանքով[5]։

1976 թ. հունվարին սիրիական տարածքից Լիբանան մտան Պաղեստինի ազատագրության բանակի և պաղեստինցիներից կազմված «Աս-Սաիկ» սիրիամետ կազմակերպության մարտիկները։ Սիրիայի յուրաքանչյուր քայլ առաջ էր բերում ՊԱԿ-ի և «Ազգային շարժման» միջև կապերի էլ ավելի սերտացում. և ընդգծվում էր նրանց քաղաքականության հակասիրիական բնույթը։

Այն, որ Դամասկոսն ուզում էր իր ազդեցությունը հաստատել ինչպես ողջ Լիբանանում, այնպես էլ ՊԱԿ-ի վրա և իր քաղաքականությունը թելադրել, վիճարկելի հարց չէ բնավ։ Սակայն պետք է ընդունել նաև այն հանգամանքը, որ այդ ուղղությամբ Սիրիայի ջանքերը միայն մեկ նպատակ էին հետապնդում՝ համախմբել արաբական ուժերը, հատկապես պաղեստինյան, լիբանանյան և հորդանանյան՝ Իսրայելին դիմակայելու և Սիրիայի անվտանգությունն ապահովելու համար[6]։ Սիրիայի նախագահ Հաֆեզ ալ-Ասադը, այս հարցում մերժում ստանալով Քամալ Ջումբլաթից և ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթից, ստիպված եղավ դիմելու ռազմական միջամտության, որն իրականացրեց 1976 թ. մայիսի 31-ին, երբ սիրիական բանակը բռնի ներխուժեց Լիբանան և գրավեց ձախերի և ՊԱԿ-ի ազդեցության տակ գտնվող մի շարք բնակավայրեր, մասնավորապես Բեկաայի շրջանում։

Իրականում ինչո՞վ էր պայմանավորված Սիրիայի միջամտությունը, որի հետևանքով «լիբանանյան հակամարտությունը ձեռք բերեց միջազգային նշանակություն»[7]։ Բանն այն է, որ Դամասկոսը վախենում էր քրիստոնյաների հանդեպ Ք. Ջումբլաթի ու պաղեստինցիների հաղթանակից, քանի որ դա կարող էր հնարավորություն տալ Իսրայելին՝ քրիստոնյաներին փրկելու պատրվակով ներխուժել Լիբանան, ջախջախել պաղեստինցիներին ու

ձախ ուժերին և, ինչպես Պ. Սիլն է նշում, «բացառված չէր, որ կփորձեր (Իսրայելը—Ա. Հ.) ստեղծել քրիստոնեական պետություն իր հովանավորության ներքո»[8]։ Մինչդեռ, դա կնշանակեր լուրջ սպառնալիք Սիրիայի անվտանգությանը։ Ուստի Հաֆեզ ալ-Ասադը հանդես եկավ աջքրիստոնեական ուժերի «պաշտպանությամբ» ռազմական բախման մեջ մտնելով «Ազգային շարժման» ու ՊԱԿ-ի հետ։ Սիրիայի ռազմական միջամտությունը չփորձեցին կանխել և նրան չպատասխանեցին ո՛չ Իսրայելը, և ո՛չ էլ Միացյալ Նահանգները, քանզի նրանք հասկացան, որ սիրիական ներխուժումը մի կողմից կոգնի իրենց դաշնակիցներին՝ «Լիբանանյան ճակատի» մեջ միավորված աջքրիստոնեական ուժերին, իսկ մյուս կողմից՝ կթուլացնի սիրիական բանակը։

Ամեն ինչ պատրաստ էր «ԱՄՆ—Սիրիա—Իսրայել գաղտնի համագործակցության համար, որը կոչվեց «կարմիր գծի» համաձայնություն, մի չգրված, չստորագրված և Սիրիայի կողմից երդում չարված համաձայնագիր, որով Իսրայելը համաձայնեց, որ Սիրիան մտնի Լիբանան»[9]։ Թեև նախքան այդ Թել Ավիվն ու Վաշինգտոնը դեմ էին լիբանանյան հակամարտությանը Դամասկոսի որևէ միջամտության։

Թերևս նման քաղաքական իրադրության արդյունքն էր այն, որ սիրիական միջամտությունը «մշտապես ընթանում էր որոշակի «շրջանակներում», որոնցից այն կողմ անցնելը Դամասկոսը վտանգավոր էր համարում»[10]։

Սակայն սիրիական բանակի մուտքը Լիբանան պայմանավորված էր նաև մեկ այլ հանգամանքով։ Խոսքը վերաբերում է Ջումբլատթի՝ իշխանության հասնելու հետապնդած նպատակին, որը նրա ե Սիրիայի նախագահի միջև հարաբերությունների լարվածության գլխավոր պատճառներից մեկն էր[11] և ամենևին էլ չէր կապվում Իսրայելի և լիբանանյան աջերի հետ Սիրիայի ունեցած հարաբերություններին։

Ջ. Ջումբլաթը չէր թաքցնում Սիրիայում իշխող Բաաս կուսակցության հանդեպ իր հակակրանքը և չէր ընդունում այն որպես ազգային շահերից բխող գաղափարախոսություն[12]։ Հետևաբար, իշխանության հասնելուց հետո, Ջումբլաթն ունենալու էր հակարաասական դիրքորոշում, մի բան, որը լուրջ անհանգստություն էր պատճառում Սիրիայի ղեկավարությանը։

Սիրիայի ռազմական միջամտությունը լիբանանյան հակամարտությանը իսոր դժգոհություն առաջացրեց արաբական մի շարք երկրների մոտ։ Եգիպտոսը դատապարտեց Սիրիայի՝ արաբական երկրների հետ չհամաձայնեցրած քայլը և խզեց Դամասկոսի հետ դիվանագիտական հարաբերությունները[13], Իրաքն իր զորքերը ուղարկեց սիրիական սահմանի մոտ, իսկ Սաուդյան Արաբիան չեզոք դիրք գրավեց և այլն։

1976 թ. հոկտեմբերի 18-ին աս-Ռիյադում կայացավ արաբական պետությունների ղեկավարների հանդիպումը, որին մասնակցում էր նաև ՊԱԿ-ի նախագահ Յասիր Արաֆաթը։ Այստեղ Սաուդյան Արաբիայի միջնորդության շնորհիվ, որոշ չափով կարգավորվեցին սիրիա-եգիպտական հարաբերությունները[14]։ Աս-Ռիյադի հանդիպման ժամանակ որոշվեց նաև դադարեցնել կրակը Լիբանանում, և օրինականացվեց սիրիական զորքերի ներկայությունն այնտեղ։

Նույն թվականի հոկտեմբերի 25—26-ը Կահիրեում տեղի ունեցավ արաբական երկրների ղեկավարների՝ լիբանանյան ճգնաժամի կարգավորմանն ուղղված երկրորդ հանդիպումը, որտեղ սահմանվեց Լիբանանում գտնվող սիրիական զորքերի քանակը (30 հզ.)։ Կազմվեցին միջարաբական խաղաղապահպան ուժեր, որի մեջ մտան Սաուդյան Արաբիայի, Լիբիայի, Սուդանի և արաբական մի շարք այլ երկրների զորամիավորումները, որոնք որոշ ժամանակ հետո ետ կանչվեցին, և Լիբանանում մնացին միայն սիրիական զորքերը։

Այսպիսով, աս-Ռիյադի և Կահիրեի հանդիպումների ժամանակ սահմանվեց Սիրիայի «հատուկ կարգավիճակը» Լիբանանում։

Սակայն այդ հանդիպումների ընթացքում ընդունված որոշումները լուրջ ներդրում չունեցան խնդրի արմատական կարգավորման հարցում[15], թեև նպաստեցին ռազմական գործողությունների ժամանակավորապես դադարեցմանը։

Այս ժամանակվանից սկսած լիբանանյան ճգնաժամը թևակոխում է մի նոր փուլ, որի հանդեպ Սիրիայի հետաքրքրություններն էլ ավելի ակտիվ բնույթ են կրում՝ մշտապես այն պահելով իր արտաքին քաղաքականության ուշադրության կենտրոնում։

ARTAK HOVHANNISIAN

THE MILITARY INTERVENTION OF SYRIA IN THE LEBANESE CONFLICT IN 1976

The first stage of the Lebanese crisis, which covered 1975—1976, occupied an important place in the foreign policy of Syria.

The author examines the causes of the Syrian intervention in the Lebanese confrontation in 1976. We suppose that it was undertaken to rescue the right Christian forces who appeared in dangerous situation at that time in their struggle againts the National Patriotic forces of Lebanon and the Palestine Liberation Organization. By this action the Syrian leadership intended to prevent the probable Israeli intervention in Lebanon, who as it was supposed could do it under the mask of helping the Christians. This brought to the worsening of the relations between Syria from one hand, and the „National Movement" of Lebanon and the Palestine Liberation Organization, from the other hand.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *P. Seale.* Asad of Syria in the Struggle for the Middle East, Berkley and Los Angeles, 1988; *G. Lenzowski.* American Presidents and the Middle East, Durham and London, 1989; *N. Wenberger,* Syrian Intervention in Lebanon, New York, 1986; *L. Chabry, A. Chabry.* Politique et Minorités au Proche-Orient, Paris, 1984; عادل رضا، قراءة في فكر الاسد، القاهرة ١٩٩٣ (Ակնարկ Սիրիայի *Ասադի մտքերի մեկնություններ, Կահիրե, 1993*), احمد الاسعد، التكامل بين مرحلتين Ահմադ ալ-Ասաադ, *Համագործակցություն երկու շրջանում*); *С. Иванов.* Межарабская политика Сирии, т. 2, М., 1986; *Е. Дмитриев,* Палестинская трагедия, М., 1986; *Л. Вольков,* Ливанский дневник, М., 1980, *В. Киселев,* Палестинская проблема и ближневосточный кризис. Киев, 1983, Գ. Սարգսյան, *Արաբական Արևելքի կոմունիստական կուսակցությունների և առաջադիմական ուժերի պայքարը դեմոկրատիայի ու սոցիալ-տնտեսական վերափոխումների համար, Երևան 1986։*

[2] *Kamal Joumblatt,* Pour le Liban, Paris, 1978.

كريم بقرادوني، السلام المفقود، بيروت ١٩٨٤

3 *Լիբանանյան հակամարտության պատճառների մասին տե՛ս* Ն. Հովհաննիսյան, *Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Երևան, 1982։*

4 *Արդ ալ-Հալիմ Խադդամի հետ միասին այդ առաքելությունն իրականացնում էին նաև Սիրիայի գլխավոր շտաբի պետ Հիքմեթ Շիհաբին և ռազմական ուժերի հրամանատար Նաջի Ջամիլը։*

5 Новейшая история Арабских стран Азии, М. 1938, стр. 135.

6 *P. Seale* նշվ. աշխ., էջ 263։

7 *G. Lenzowski*, նշվ. աշխ., էջ 216։

8 *P. Seale*, նշվ. աշխ., էջ 279։

9 *Նույն տեղում, էջ 279։*

10 *С. Иванов*, նշվ. աշխ., էջ 350։

11 *K. Joamblatt*, նշվ. աշխ., էջ 167։

12 *Նույն տեղում, էջ 160։*

13 *Այս մասին մանրամասն տե՛ս Քարիմ Բագրատունի, նշվ. աշխ., էջ 83—67։*

14 Арабский мир. Три десятилетия независимого развития. М. 1990. стр. 306.

15 Ծ. Կարամանուկյան, *Արաբական պետությունների լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988, էջ 165։*